վասն կենաց և բարօրութեան Բագուայ հասարակութեան և գործող անձանց, և յետ այնր Էքզարխն առաջարկեաց վասն կենաց Կայսեր. իսկ կառավարչապետն յոտին կանգնեալ և ամենեքեան, առաջարկեաց զբաժակ վասն կենաց և երջանկութեան Կայսրուհւոյն։ Ի զուարճագէմ խօսակցութեանն՝ դարձաւ առ իս և ետհարց. «Այդ 1854 թուի պատերազմական Խաչն ո՞ր տեղ էք ստացել» զբառս հարցմանն իմանալով՝ իսկոյն պատասխանեցի՝ «Էջմիածին». Կայսրն քաղցրութեամբ կրկնեաց «Այո՛ Էջմիածին – да, Эчміадзинъ: Եւ այսպէս զուարճութեամբ հաշուեցաք քան թէ կերաք զ15 և աւելի տեսակս կերակրոց և զ6 տեսակս ըմբելեաց։

Յետ հացկերութին Կայսրն կանգնեալ յոտին և ամենեքեան՝ Էքզարխն «Ձլիութիւն սեղանոյս». ասելով՝ օրհնեաց զսեղանն. իսկ Կայսրն և Կայսրուհին բաւական սկսան խօսակցիլ ընդ աստիճանաւորս զուարճաբանութեամբ և ծիծաղելով -- ընտանեբար. ապա՝ Էքզարխն մերձենալով առ Կայսրն՝ և խոնարհեցուցանելով զգլուխն՝ ողջունեաց զԿայսրն և Կայսրն զձեռն տալով՝ մնաք բարեաւ ասաց. յետ որոյ՝ ըստ օրինակի Էքզարխին և ես մերձեցայ առ Կայսրն ողջունել և բարի ճանապարհ մաղթել. և Կայսրըն նոյնպէս զձեռն տալով ինձ՝ ասաց մնաք բարեաւն. յետոյ Էքզարխն դիմեաց առ Կայսրուհին գնաք բարեաւ ասելոյ. և Կայսրուհին մեկնեաց զձեռն առ Էքզարխն ի համբուրել, ուստի և Էքզարխն համբուրեաց զձեռն Կայսրուհւոյն. նոյնպէս և ես հետեւելով օրինակի Էքզարխին՝ համբուրեցի զձեռն Կայսրուհւոյն գնաք բարեաւ ասելով։

Եւ ապա Կայսրն դարձուցեալ զերեսս առ բազմականն՝ ասաց «մնաք բարեաւ, պարոնայք». և ընդ Կայսրուհւոյն և ընդ ժառանգին անցին ի ներքին սենեակն ի հանգստանալ. որ 9½ էր ժամու. և մեք եւս գնացաք ի մեր բնակութիւնս։ Իսկ ի 10½ ժամուն երեկոյեան Կայսրն իւրայնովքն հանդերձ գնաց ի կայարանն երկաթուղւոյն և մեծաւ գոհունակութեամբ մեկնեցաւ ի Բագուայ, և եկեղեցիքն ամենայն զանգակահարութեամբ զբարի ճանապարհ մաղթեցին Կայսերն և Կայսերական գերդաստանին։

Կայսրն ի լինելն ի Բագու այցելութիւն արար եկեղեցեաց ռուսաց և արքունի ուսումնարանաց և հիւանդաց, և բանտարկե-